



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5(074)

Ճ-14

235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

VII

Ա ՅԵ ԺԱԴՈՎԱԿԻ

ՏԵՂԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Կրնացումներով յեզ փոփոխություններով
բարգմանեց Ա. Ա.

ՅԵՐԵՎԱՆ — 1928

19 MAY 2005
19 MAY 2010

Հ. Խ. Ա. Հ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

04 MAY 2010

5(074)
Ճ-14

VII

Այ

Ա. ՅԵ. ԺԱԴՈՎԱԿԻ

ՏԵՂԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

Կրիատումներով յեզ փոփոխություններով
բարգանեց Ս. Ս.

14450-5



ՏԵՐԵՎԱՆ — 1928

18 JUN 2013

235

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՄ. 826 Բ
ՏԻՐԱՎ. 800.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿՈՒՆՔՆԵՐ

Բնության ճանաչելը հսկայական հետաքրքր քրություն և ներկայացնում: Նա կրթական և դաստիարակչական գործում ահազին նշանակություն ունի և վիրջապես այդ ճանաչության հետևանքներն են առլիս այն բարիքները, առանց վորոնց ժամանակակից կուլտուրական մարդկչչի կարող իր գոյությունը պահպանել:

Բնությունը ճանաչելու և նրան ուսումնա-
սիրելու ճանապարհները և միջոցները կարող են
չափազանց բազմազան լինել, բայց մեր կարծի-
քով բնության հետ ծանոթանալու ամենահեշտ
և մատչելի ձևերից մեկը հանդիսանալում ե բնա-
գիտական հավաքածուների դիտողությունը և ու-
սումնասիրությունը թանգարանում։ Յեթև վորեա
մեկին ինչ-ինչ պատճառներով անմատչելի յի,
բնության անմիջական ուսումնասիրությունը,
ապա այդպիսին պետք ե զիմի տեղական թան-
գարանը, վորը պիտի այնպիս կազմակերպված
լինի, վոր նրա հավաքածուները կարողանան ի-
րենց մեջ պատկերացնել լրջապատող բնությու-
նը։ Թանգարանի հավաքածուների ուսումնասի-
րությունն ինքնազարգացման համարյա ամենա-
մատչելի, ժողովրդական և միաժամանակ նաև

Ճիշտ ձեն ե, վորից կարող են ոգտվել ամենքն
առանց տարիքի խորության, և այս ձեզ չի կա-
րող արհամարհել վոչ պատահին և վոչ ծերունին:
Ինքնազարդացման այդ միջոցով զրադվողը յեր-
կու նպատակի յե հասնում, նա ձեռք ե բերում
վորոշ գիտելիքներ և բարձրացնում ե իր ընդ-
հանուր մտավոր զարգացումը։ Սրանցից թե
մեկին և թե մյուսին յուրաքանչյուր անհատ
պիտի ձգտի։

Մեր կարծիքով, հենց այդպիսի հիմնարկ և
վոր պիտի հանդիսանա տեղական բնության
թանգարանը, վորը հնարավորու-
թյուն և տալիս գիտողին շրջապատող բնության
մասին բազմակողմանի և լրիվ գաղափար ստա-
նալու։

Հարկ չկա ապացուցելու, վոր բնակչության
կենցաղն ամբողջապես կախված ե շրջապատի
բնույթից, Քանի լավ ճանաչենք մեզ շրջապատող
բնությունը, այնքան ավելի կարող ենք մեզ հա-
մար կյանքի բարենպաստ պայմաններ ստեղծել
բառիս լայն իմաստով։ Յերկրի հարստությունը
կախված ե բնության ուժերի ոգտագործման
հմտությունից։

Վերևում ասածներն արդեն բավական են,
վորպիսզի մենք ընդունենք տեղական բնության
թանգարանի, կամ գալիք առաջ գիտա-
կան թանգարանի անհրաժեշտությունը
վորի մեջ տեղական բնությունն առաջնակարգ
տեղ ե գրավում։

Այդպիսի թանգարանը կարող և մեծ ծա-

ռայություն մատուցել նաև մանուկ սերնդի
դաստիարակությանն ակտիվ մասնակցող անհատ-
ներին։

Կանանց և ընդհանրապես մանուկներին
դաստիարակող անհատների մեջ ընազիտական
գիտելիքների լայն տարածման անհրաժեշտու-
թյունն առանձնապես կարևոր է դարձնում այդ
գիտելիքների հանրամատչելի աղբյուրներ ստեղ-
ծելու հարցը։ Յուրաքանչյուր դաստիարակչունի,
յուրաքանչյուր մայր պետք ե ընության մասին
առողջ հասկացողություններ տարածող հանդիսա-
նա, յեթե նա չի ցանկանում զառնալ նախապա-
շարմունքների պատվաստող և մանուկ մտքի
ինքնազարդացման առողջ ձգտութները մերժնող։

Մանուկ սերնդի դաստիարակիչները պի-
տի թանգարան հաճախին, և այդ անկասկած
կըբարձրացնի նրանց մտավոր զարգացումը և
դաստիարակչական գործում մեծ դեր կխաղա։

Թանգարանի կազմակերպումը չպիտի պատա-
հական բնույթ կրի, նա չպիտի լցվի պատահա-
կան եքսպոնատներով, այլ պիտի կազմակերպվի
լավ մտածված և համապատասխան մասնագետ-
ների ձեռքով կազմված ծրագրով։ Բայց ի՞նչպես
և ի՞նչ ծրագրով ուրեմն կազմակերպել թանգա-
րանը։ Ահա հենց այս զրվածքի նպատակն ել
այդ և՝ տալ տեղական թանգարանի որինակ
ծրագիրը։ Մեր ասածներից արդեն հասկանալի
յե, վոր այսուհեղ կարող է խոսք լինել տեղական
բնության թանգարանի, կամ այլ կերպ ասած՝
անդական թանգարանի բնագիտական բաժնի

մասին։ Տեղական կամ գավառագիտական թանգարանն իհարկե պետք ե պատկերացնի գավառի վոչ թե միայն բնությունը, այլև մարդու գործունեյությունը, գավառի պատմությունը, նրա հոգեկան կյանքը, կուլտուրան, արդյունարհությունը, տնայնագործությունը, լուսավորության գործը, բժշկությունը, և այլն, և այլն։ Այս ամենը թանգարանում պիտի ունենա իր արտացոլումը, սակայն զրանց մասին մենք թողնում ենք համապատասխան մասնագետներին խոսելու։

Թանգարանի կազմակերպման ժամանակ ամենից առաջ պիտի կանգ առնել այն հարցի առաջ, թե թանգարանում ինչ հավաքածուներ և առարկաներ պիտի ունենալ։ Անկասկած, յուրաքանչյուր թանգարանում բացի բնական հավաքածուներ պիտի լինեն նաև մոդելներ, աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, քարտեզներ, սքեմաներ, նկարներ, լուսանկարներ, գիտնականների և գործիչների նկարներ, պատկերներ, դիապոզիտիֆներ, մանրադիտակալին պրեպարատներ, գրականություն և այլն։

Թանգարանը հավաքածուների դամբարան չպէտի լինի. պետք ե ի նկատի ունենալ, վորընագիտական հավաքածուն փոստանշերի (մարկաների) ժողովածու չի։ Բնադիտական թանգարանում հավաքածուները պիտի կանոնավորված լինեն խիստ վորոշ կարգով. յուրաքանչյուր հքսպօնատ պետք ե այնպես գրված լինի, վոր հարմար լինի ուսումնասիրելու։ Հավաքածուների դա-

սավորման ժամանակ պետք ե անտես չառնել նաև հստետիկ նպատակները, — առարկաները պիտի զասավորված լինեն կոկ և գեղեցիկ։

Հավաքածուների հմուտ դասավորելու դեպքում առարկաների և յերկույթների մեջ պիտի զգացվի կապ, վորոշ փոխարարերություն, որինակ՝ կենդանիների և բույսերի, կենդան և անկենդան բնության մեջ և այլն։ Այդ նպատակին հասնելու համար թանգարանի կենսաբանական բաժինը ցանկալի յե այնպես կազմել, վոր առարկաները խմբավորվեն վոչ թե սիստեմատիկ (կարգաբանական) յեղանակով, այլ այնպես վորընորոշեն կենսաբանական առանձին յերեւութները։ Թանգարանում վոչ միայն առարկան պիտի ցույց տար, որինակ՝ մի բույս կամ կենդանի, այլ և հասկանալի գարձնել, իսկ այդ նըպատակին ծառայում են հավաքածուներին կից դրված մոդելները, նկարները, դիագրամները և այլն։

Շատ լուրջ ուշադրություն պիտի դարձնել թանգարանի եքսպոնատների մակագրություններին (հտիկետների). առանց մակագրությունների թանգարանը միանգամայն կողրցնի իր որդեքը։ Ի հարկի, ցանկալի յե, վոր մակագրությունները կազմված լինեն վորքան կարելի յե լրիվ կերպով, բայց համենայն գեպս ցուցադրված առարկաների մակագրությունների մեջ պիտի լինեն զոնե հետեւյալ տեղեկությունները։

Անունը (տեսակ, ցեղ, ընտանիք)

Վեռը (կենդանիների և բույսերի մի քանիսի)։

Վորտեղից եւ վերցրած (գալառ, գալառակ, զյուղ):

Բնակավայրը (անտառ, մարգագետին, ձոր, ճահճ):

Հավաքման ժամանակը (տարի, ամսաթիվ),

Հավաքողի անունը,

Վորոշողի կամ ստուգողի անունը,

Առարկայի և (պետք եւ պահել հատուկ մատյան, ուր պիտի մուծվեն բոլոր ստացվող իրերն ըստ ևև):

Վորոշ գեղքերում ավելորդ չի լինում հիշատակել նաև առարկայի նշանակությունը բնության մեջ և մարզու կյանքում: Այսպիսով կապազվի տվյալ եյակի կապը մնկ կողմից բնության հետ, իսկ մյուս կողմից մարզու հետ: Պետք են բառականական թանգարանի պատկերազարդ ցուցակը:

Յեթե թանգարանի վրա նայենք վորպիս գիտությունը ժողովրդականացնող մի հիմնարկի վրա, ապա այդ գեղքում անկասկած ցանկալի կլիներ վոր թանգարանի հաճախորդները չըավարդի նայան միայն հավաքածուների մակագությունները կարդալով, այլ վորոշ որեր թանգարանի աշխատակիցների կողմից արվելին նաև համառու բացատրություններ ցուցադրված հավաքածուների մասին: Բայց ահազին նշանակություն կունենար, յեթե այդ բացատրություններից բացի յերբեմն եւ կազմակերպվելին ամրող չափանակն դասախոսություններ գալիք ընության առանձին հարցերին կամ ընդհանուր բնագիտական ինդիքտներին նպիրված: Հետեւապիս ցանկալի վարդապետական հավաքածուները:

Կլիներ թանգարանում ունենալ նաև հատուկ լըսարան և մոգական լապտեր իր պարագաներով:

Թանգարանին կից պիտի ունենալ գրադարան գալառն ուսումնական կամ աշխատանքների համար, լաբորատորիա՝ զանազան հետազոտություններ կատարելու, և աշխատանոց—հավաքածուներ, մոդելներ, պրեպարատներ և այլն պատրաստելու համար:

Թանգարանը պիտի կազմակերպի նաև պարբերական ցուցահանդեսներ՝ որինակ գալառի լուսանկարների, եքսկուրսիոն գործեքների և այլն:

Թանգարանի շրջանակները կարելի յեւ լայնացնել մտցնելով նրա մեջնաև տեխնոլոգիական հավաքածուներ, վորոնք անկամած մեծ հետաքրքրություն կտավածացնեն և հաճախորդներին կորդեն ինքնուրուցն աշխատանքների և հետազոտություններուն ուղղությամբ: Այդ հավաքածուների համար իբրև ընդհանուր թեմա կարելի յեւ վերցնել հետեւյալը՝ գույքառի հանքերը, բույսերը և կենդանիները և ինչ են նրանցից պատրաստում մարդու կարիքների համար: Հետաքրքրիր և ուսանելի յեն նույն ուղղությամբ կազմած հաև գյուղատնտեսական հավաքածուները:

Վերջապես թանգարանը ճիշտ ճանապարհի վրա կանգնած կլինի, յեթե ունենար կենդանը ու թյան բաժին, այսինքն՝ կազմակերպեր վիվարիում, ակվարիում, ինսեկտարիում, վորտեղ կալանգին և կղարգացվեն գալիք ամենահետաքրքրական բույսերից և կենդանիներից:

Ինչպես վերևում արդեն ասել ենք, թանգարանը պետք ե լայն հանրակրթական նպատակների ծառալի. նա կծառայի, յերբեմն նույնիսկ պարտավոր ե ծառայել նաև դպրոցական նըղատակներին: Ուստի, թանգարանի բուսաբանական, կենդանաբանական և մյուս բաժինները պիտի այնպես կազմված լինեն, վոր հնարավոր լինի դպրոցներում ավանդվող բնագիտական առարկաների գանաղան հարցերը լուծել տեղական հավաքածուների վրա:

Թանգարանի հավաքածուները կազմելու ժամանակ հարկավոր չե սահմանափակվել. ինչքան լայն լինեն նպատակները, այնքան լավ: Ինչքան շատ գալափարներ խտանան այս կամ այն հավաքածուների մեջ, այնքան ել շատ գոհացում կը տա թանգարանը:

Այստեղ առաջարկած թանգարան կազմակերպելու ծրագիրն անկասկած վորոշ փոփոխությունից հետո կարելի յե կիրառել նաև յուրաքանչյուր դպրոցի համար: Սա կարող ե հիմք ծառայել դպրոցական թանգարանների համար, ի հարկե վոչ վոք չի կարող ժխտել, վոր մեր դպրոցները աղքատ են ոժանդակ պիտույքներով, մինչդեռ ինքն ուսուցիչը հեշտությամբ կարող եր ստեղծել հարուստ և արժեքավոր թանգարան, սկսելով տեղական բնությունից հավաքածուներ կազմել Բացի այդ, ինքնուրույն կերպով ժողոված հավաքածուներից կազմած համեստ, փոքրիկ թանգարանը, կամ նույնիսկ մեկ պահարանը կարող ե ավելի լայն ծրագիրների հիմք դառնալ:

Հասարակ, դպրոցական թանգարանը կարող ե գարգանալ և գառնալ իր բռվանդակությամբ հետաքրքիր և հարուստ տեղական բնության թանգարանի մեջ գառնալ մեջ գառնալ: Ուսուցիչը կդառնա կուլտուրական մեծ գործի ձեռնարկող և կենտրոն:

Դպրոցի շրջապատից ժողոված նյութերից թանգարան կազմելով, կարելի յե դպրոցը կյանքին մոտեցնել բառիս լայն իմաստով:

Թանգարանի կազմակերպման գործում բացի ուսուցչից կարենոր գեր պիտի խաղան նաև աշակերտները, վորոնք ուսուցչի զեկավարությամբ կարող են շատ արժեքավոր նյութեր ժողովել: Սակայն այս դեպքում մոռացության չպիտի տալ բնության պահպանության խնդիրները: Գետք ե սովորեցնել աշակերտներին խընամքով վերաբերվել շրջապատող բնությանը:

Հաճախ պատճառաբանում են, թե թանգարանի համար զետեղարան չկա, մինչդեռ դպրոցի յուրաքանչյուր պահարանը, դարակը, անկյունը կարող ե թանգարանի համար սկզբնական զետեղարան ծառայել, անհրաժեշտ ե վոր նյութ լինի, այն ել լավ մակագրված:

Թանգարանի նյութերը կարելի յե դասավորել հետեւյալ բաժիններում:

1. Հանգարանություն և յերկրաբանություն.
2. Հողագիտություն:
3. Ողերեութաբանություն
4. Բուսական աշխարհ.
5. Կենդանական աշխարհ.

6. Աղքաբնակություն.
7. Բրածո կենդանիներ և բույսեր.
8. Եվոլյուցիոն տեսությունն.
9. Բնություն պահպանությունն.
10. Գալառի բիբլիոգրաֆիա.
11. Եքսկուրսիոն պարագաներ:

Սակայն այս բաժինները պարտապիր չեն բոլոր թանգարանների համար, նյութերը կարելի յե դասավորել նաև այլ սկզբունքով, դա կախված է թանգարանի կազմակերպիչներից:

Նյութեր ժողովելու և հավաքածուներ կաղմելու գործը բավականին բարդ է, և պահանջում է ուշադիր վերաբերմունք և վորոշ չափով հըմտություն, վորը կարելի յե ձեռք բերել հենց աշխատանքի ընթացքում: Թանգարանային աշխատանքն ունի հետեւյալ հտապնդելը՝ 1) նյութերի ժողովումը, 2) նյութերի մշտացումը (ՓԻԿ-սակայ) կամ չորացումը, 3) վորոշումը, 4) մակագրումն ու հավաքածուներ կազմումը և 5) պահպանություն զանազան միասնական միջուկուներից և փչացումից¹:

Հիշված հարցերի վրա մենք այս հոդվածում յերկար կանգ չենք առնիլ. այդ մասին ընթեր-

¹ Հեղուկների մեջ (սակառ, փորմալին) պահպան պըրեսպատաները յերբեմն կարիք են զգում փոփելու կամ ավելացնելու հեղուկը, մանավանդ, յերբ ամանները լով չեն փակված: Չըրացրած նյութերը բույսեր, մորթեր, խըրվելակներ պաշտպանվում են ցեցերից և այլ միասնականերից նախառին ցանելով կամ ախտահանման այլ միջներով:

յոզե կկարգա հատուկ գրականության մեջ, վարունց ցանկը բերված և հոդվածի վերջում:
Այժմ անցնենք թանգարանի բաժիններին:

II. ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

1. ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵԿ ՅԵՐԿՐԱԲԱՆ-ՆՈՒԹՅՈՒՆ

Գավառում հանդիպող բուլոր հանքերը (հավաքածու):

Բյուրեղների մողելներ (ստվարաթղթից, գիպսից կամ փայտից):

Բնական բյուրեղներ և արհեստական (զանագան աղերի լուծույթներից ստացված) բյուրեղներ:

ՍլշՄ յերկրաբանական քարտեզը.

Կովկասի յերկրաբանական քարտեզը.

Հայաստանի յերկրաբանական քարտեզը.

Գավառի յերկրաբանական քարտեզը.

Գավառի զանազան վայրերի յերկրաբանական պրոֆիլները:

Լանդշաֆտներ յերկրի պատմության զանազան դարաշրջաններից, վորոնց յենթակա յե յեղել տվյալ գավառը և վորոնք ավելի պարզ և խիստ կերպով են արտահայտվում գավառում:

Գավառի բոլոր լեռնատեսակները (հավաքածու):

Լեռնատեսակների ողարաման պլոցեսի վերաբերյալ հավաքածուներ:

Փոքր պալերի (վալս) և լեփուկների (գալկա)
հավաքածուներ:

Մեծ պալերի լուսանկարներ:
Սառցարանների թողած խաղերի լուսանկար-
ներ..
Սառցարանների գոյացրած քարակույտերի լու-
սանկարներ:

Ջրի յերկրաբանական գործունեյության հե-
տեղանքների (ձոր, գետ) լուսանկարներ և
նկարներ:

Գավառի ոգտակար հանքերի հավաքածու:

2. ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի աշխարհագրական քարտեզը.
Գավառի աշխարհագրական քարտեզը.
ՄԽՀՄ բարձրաչափական (հիմումետրիկ) քար-
տեզը:
Հայաստանի բարձրաչափական քարտեզը.
Գավառի բարձրաչափական քարտեզը.
ՄԽՀՄ ջրագրական քարտեզը.
Հայաստանի ջրագրական քարտեզը.
ՄԽՀՄ հողագիտական քարտեզը.
Հայաստանի հողագիտական քարտեզը.
Գավառի հողագիտական քարտեզը.
Հողի պրոֆիլների նկարներ:
Գետերի հունի և ջրակիր հորիզոնների նկար-
ներ:
Գավառի հողերի նմուշների հավաքածու:
Գավառի հողերի առանձին նմուշների անալիգ-
ների ազյուտակներ (հումուսի, աղերի և
այլ նյութերի քանակը):

3. ՈՒԵՐՅԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակներ հետևյալ տվյալներով՝ բարեխառ-
նության,
տեղումների,
ձյունածածկի,
պարզ և ամպամած որերի,
մառախլապատ որերի,
կարկտահարության,
գիշերային ցրտումների (զամարօչք),
գետերի սառչել ու բացվելու:
Ծանրաչափական ցուցումներ.
Քամիներ:

4. ԲՈՒԽԱԿԱՆ ԱՇԽԱՐԴ

Յերկրագնդի բուսաաշխարհագրական քարտեզ:
ՄԽՀՄ բուսաաշխարհագրական քարտեզ.
Կովկասի բուսաաշխարհագրական քարտեզ.
Հայաստանի բուսաաշխարհագրական քարտեզ.
Գավառի բուսաաշխարհագրական քարտեզ.
Գավառի քարտեզը, վրան նշանակած այս կամ
այն տեսակետից հետաքրքրական կամ հազ-
վագույտ բույսերի բնակավայրերը:
Գավառով անցնող բույսերի տուրածման քար-
տեզը:
Գավառի քարտեզը, վրան նշանակված բուսա-
կան, համակեցությունները (անտառ, մար-
գագետին, վարելահող և այլն):
Հիշված համակեցությունների բոնած տարա-
ծությունների տոկոսային հարաբերությունը
ցույց տվող դիտոգրամներ և աղյուսակներ:

Գավառոի բուսաբանական հետազոտություն-
ների մաշրուտների քարտեզ:

Գավառոի բուլոր վայրի բույսերի հերթարիում
սիստեմատիկ կարգով կազմած:*)

Գավառում գտնված բուսական տեսակների
քանակը ցույց տվող աղյուսակ:

Գավառի պարագիտ բույսերը.

Գավառի սապրոֆիտ բույսերը,

Կիսապարագիտ բույսերը.

Եղիքիտ բույսերը:

Այս հավաքածուները կարելի յե չորացնել
և պահպանել յուրաքանչյուր հավաքածուն ա-
ռանձին սովարաթղթի կամ տախտակի վրա:
Բայց ավելի արժեքավոր և դիմացկուն են այդ
բույսերից $1\text{--}20\%$ ֆորմալինի մեջ պատրաս-
տված պրեպարատները:

Հիշված հավաքածուներից յուրաքանչյուրին
պիտի կցել նկարներ, վորակղ ցույց կտրվեն այդ
բույսերի առանձնահատկությունները. որինակ
քլորոֆիլի բացակայությունը պարագաների
մեջ, տերեների և արմատների մորֆոլոգիկ ձե-
փափոխությունները և այլն:

Միմբիոտիկ յերկութներ: Մեկ սավարա-
թղթի վրա փակցնել ծառալուների (լիշաйնիկ)
տեսակներ, թիթենածածղիկ բույսեր իրենց ար-

ծԱՆՈԹԱՒԹՅՈՒՆ. — Այս հերթարիումը կարիք չետ
ցույցադրելու, այլ հարկավոր և պահել հատուկ պահարու-
նում և պաշտպանել վասառուներց՝ ցեցից և այլ միջուռ-
ներից: Պաշտպանության ամենալավ միջոցներից մեկն է
ծծմբածիների գործըներով աղտաճանելը տարին մեկ
անգամ, իսկ այնուհետև վրան ցանել նախալին:

մատներով, վորոնց վրա յերկում են արմատային
պալարիկներ և այլն:

Կարելի յե ֆորմալինի պլրեպարատներ
պատրաստել զանազան տեսակի թիթենածաղիկ
բույսերից իրենց արմատներով: Այս հավաքածու-
ներին կից նույնպես պիտի ունենալ ծառալունե-
րի և արմատային պալարիկների կազմության
վերաբերյալ նկարներ: Ավելորդ չեն լինի նաև
միրմիկոփիլիայի (կենացություն — սիմբիոզ
մրջունների հետ) վերաբերյալ նկարներ:


Միջատակիր բույսեր, յեթի կան ավել գա-
վառում: Ավելի լավ ե դրանց պահել ֆորմալինի
կամ սովորակի մեջ, բայց կարելի յե նաև չորաց-
նել և փակցնել սովարաթղթի վրա: Սրանց նույն
պես կցվում են նկարներ միջատորս ապարա-
տի կազմության վերաբերյալ:

Քարոզիլ (չորասեր) բույսեր: Սրանք ել
փակցվում են սովարաթղթի վրա, բայց ավելի
հյութալիները (սուկկուլենտ) պահվում են ֆոր-
մալինի մեջ: Այս բույսերից առանձին-առանձին
հավաքածուներ են պատրաստում: բույսեր վորոնք
յերաշտից պաշտպանվում են տերեները փակե-
լով: Վորոնք պաշտպանվում են հայելանման փայ-
լուն մակերեսով: Վորոնք պաշտպանվում են ըը-
նորհիվ նրան, վոր տերեները փոքրացել են և
ծածկված են թիթենածներով: Սուկկուլենտներ կամ
հյութալի բույսեր և այլն:

Աղանողային բույսեր: Բույսերի պաշտպան-
վելը թշնամիներից: Կազմվում էն առանձին
հավաքածուներ այն բույսերի, վորոնք, պաշտպան-

* Ա. ԽԱՆԻՉՅԱՆ

Անվան



17

վում են թշնամիներից քիմիական միջոցներով (իրենց միջ պարունակում են թունավոր կոմուֆիդ հոտ ունեցող նյութեր): Յեզ առանձին այն բույսերի, վորոնք պաշտպանվում են մեքանիկական միջոցներով (փշեր, ասեղներ, սուրծաղիկներ և այլն):

Բույսերի պաշտպանությունը ցրտից: Բույսեր, վորոնց գործարանները ծածկված են խավով: Բույսեր, վորոնց գործարանները կարմիր գույն ունեն: Ռառնկների եկուողիկ սպեկտրի աղյուսակ:

Բույսերի բաղմացումը: Այս խնդրի հետ կապված հարցերը պետք են ցուցադրվեն զանազան հավաքածուներով:

ա) Սպորներով բաղմացող բույսեր (սունկեր, ջրմուռներ, քարաքոսներ, ծառալոռներ, մամուռներ, ձարխոտեր, ձիածետներ):

բ) Վեգետատիվ յեղանակով բաղմացող բույսեր:

գ) Տարրեր կազմության ծաղիկներ ունեցող բույսեր: Գավառի բույսերի ծաղիկների գույները, Գարնանային և աշնանային ծաղիկների գոյները, (չորացրած ծաղիկները փակցնում են ստվարաթղթի վրա ըստ սպեկտրի գույների *):

Առանձին հավաքածու այն բույսերի վորոնց ծաղիկները փոշոտվում են միջատների ողնությամբ և քամու միջոցով:

*) Ծաղիկների հավաքածուները պիտի պաշտպանել լույսի աղղեցությունից, հակառակ գեպբում կարճ ժամանակամիջոցում գունաթափվում և կորցնում են իրենց արժեքը:

Հավաքածու այն միջատների, վորոնց ողնությամբ կատարվում են տեղի բույսերի փոշությունը: Նկարներ միջատների ողնությամբ փոշություղ ծաղիկների կազմության և փոշության պրոցեսի վերաբերյալ, Գիշերային միջատների ողնությամբ փոշություղ ծաղիկներ (հավաքածու), ցերեկվա միջատների ողնությամբ փոշություղ ծաղիկներ (հավաքածու): Այլ միջոցներով փոշություղ ծաղիկների հավաքածուներ: Նեկտարը հափշտակող միջատներից տարրեր միջոցներով պաշտպանված ծաղիկների հավաքածուներ: Այս հավաքածուներն կից անհրաժեշտ են ունինալ բացատրական նկարներ: Անձրեկից պաշտպանված ծաղիկների հավաքածուներ (նույնպես անհրաժեշտ են կցել բացատրող նկարներ): Պառակների հավաքածուներ (չոր պտուղների հերթարիում և փորմալինի կամ սպիրտի միջ պահպան հյութալի պտուղների հավաքածուներ):

Սերմերի հավաքածուներ (սերմերը ժողովում են ապակե վորձանոթների, տպակեպատուփերի կամ փոքրիկ սրվակների միջ): Զանազան միջոցներով տարածվող սերմերի հավաքածուներ (քամու, ջրի, կենդանիների ոգնությամբ և ինքնուրույն կերպով տարածվող սերմեր):

Անտառի կյանքը պատկերացնող հավաքածուներ: Տվյալ գավառի ծառատեսակների նմուշներ: Թփերի հավաքածուներ: Առանձին ծառերի նկարներ, վորոնք բռնել են անտառի միջ և վորոնք բռնել են աղաւա միջավայրում: Նկարներ տարբեր տեսակի անտառների: Անտա-

սի հարկերը (յրսություն) ցույց տվող նկարներ։ Անտառի այն մասի լուսանկարները, վորտեղ կարելի յի դիտել անտառային համակեցությունների փոփոխությունը։ Գավառի անտառների բաշխման քարտեղը։ Գավառի անտառայնության քարտեղ։ Տարեր տիպի անտառների խոտարույսների հավաքածուներ։

Զրային և ճահճային համակեցությունների կյանքը։ Զրաբույսերի հերքարիում։ Նկարներ ավագանների հիվանդությունների։ Զրային բուսականության լուսանկարներ։ Հիտերովի կիայի յերեռյթները ցույց տվող հավաքածուներ։ Գավառի ճահճանների քարտեղը։

Գավառի մարզագետինների բուսականության հավաքածուներ։ Բույսերի սիստեմատիկ հերքարիում առանձին հկողողիկ խմբերի բաժանված։ Մարգագետինների տարածությունը ցույց տվող աղյուսակ։ Մարգագետինների բուսականության հարկերի բաժանվելը (աղյուսակ)։ Մարգագետնային զանազան բույսերի լուսանկարներ։ Մարգագետինների կարգաբանության աղյուսակ—սրբմատ։ Մարգագետնի սելինֆը (մողել կամ նկար)։ Մարգագետնի ջրային սեծիմը (նկար)։ Մոլախոտերի հավաքածու։

Տեղական բնության որացույց, —մի աղյուսակ, վորի վրա նշանակվում է թե գավառում յերբ ե բացվում առաջին տերելը, յերբ ե ծաղկում առաջին ծաղիկը, յերբ ե հասունանում առաջին պտուղը և այլն։

Տեղական բնության թանգարանն իր այցե-

լուներին պիտի ցույց տա վոչ թե կարգաբանական հերքարիում, այսինքն բույսերի հավաքածուները դասավորված ըստ կարգերի և ընտանիքների, այլ մի բան ել ավել. այստեղ այցելուն նախ և առաջ պիտի տեսնի բույսերի զանազան հկողողիկ առանձնահատկությունները։ Հավաքածուները այնպիս պիտի կազմված լինին, վոր այցելուն վոչ թե միայն բույսերի անունների հետ ծանոթանա, այլ նա նկատի այդ բույսերի իկողողիկ ըլունորոշ կողմերը։ Ուստի բույսերը պիտի դասավորված լինին առանձին հկողողիկ խմբերով։

Թանգարանը նույնական չի կարող աչքաթող անել բույսերի ձերի և կազմության առանձնահատկությունները, նա պարտավոր է ունենալ նաև ձեւաբանական զանազան հավաքածուներ, վորոնց մեջ կարեռն այն է, վոր ձեւաբանական առանձնահատկությունները ցուցադրվեն հատկապես տեղական բուսականության ներկայացուցիչների վրա։

Այստեղ բերենք մի քանիսը այդ հավաքածուներից։

1) Արմատ.—զանազան ձերի արմատների հավաքածու (ավելի լավ ե պըհպարատներ պատրաստել ֆորմալինի կամ սպիրտի մեջ)։

2) Ցողուն.—տարբեր ձերի ցողունների հավաքածու (ուղիղ կանգնող, մազլցող, փաթվող, տարածվող և այլն)։ Զանազան ձերի ցողունների հատվածներ (կլոր, տափակ, յեռանկյունի, քառանկյունի)։ Ցողունի (ծառի) տարեկան շերտերը (բնական հատվածներ և նկար)։ Ցողունի

Ճեափոխությունները՝ ստորյերկրյա ցողուններ.
(պալար, կոճղ, կոճղարմատ), փշեր, բեխիկներ,
ասիմիլացիոն գործարանի փոխված ցողուններ,
(հավաքածուներ և նկարներ):

3) Յերև.—տերեի ձերը (հավաքածու):
Միաձև, յերկծե և բաղմաձև տերեավոր բույսեր
(հավաքածու): Տերեի կազմը (նկար), տերեների
դասավորությունը ցողունի վրա (հավաքածու),
տերեի ձեափոխությունները՝ բեխիկների, փշերի,
միջատորս ավարատի և այլն (հավաքածու-
ներ և նկարներ), Բույսերի անալոգիկ և հոմոլո-
գիկ գործարանները:

4) Սերմ.—միաշաքիլ, յերկշաքիլ և բաղ-
մաշաքիլ սերմեր, նրանց կազմությունը (հավա-
քածուներ, մողելներ և նկարներ):

Բույսերի զանազան մասերի (տերե, ծաղիկ,
պտուղ և այլն) այլանդակումները միջատներից
և այլ ֆլամատուններից (հավաքածուներ): Բույսե-
րի հիլանդությունները, սունկային պարագիտ-
ներ (հավաքածուներ ֆլամատ մասերի):

Վերեւմ նշած բուսաբանական բոլոր հա-
վաքածուները կրում են զուտ գիտական բնույթ,
բայց անհրաժեշտ է ունենալ նաև գործադրա-
կան բնույթ ունեցող հավաքածուներ հետեւալ
ընդհանուր վերնագրի տակ «Գավառի բույսերը
և ինչ են տալիս նրանք մարդուն»:

1. Մեղրատու բույսեր.
2. Դեղաբույսեր.
3. Տեխնիքական բույսեր.
4. Հացաբույսեր.

5. Բանջարանոցային բույսեր.
6. Վայրի բանջարներ
7. Թունավոր սունկեր (մյուս սունկերից
տարբերելու համար):
8. Ուտելու սունկեր.
9. Վայրի ծառապտուղներ.
10. Վայրի հատապտուղներ.
11. Ինչ են շինում բույսերի ցողուններից
և կեղեկից.
12. Եխնարարական փայտանյութեր և այլն:
Այս հավաքածուներին պիտի կցիլ նաև նը-
կարներ, ու այլուսակներ, լուսանկարներ, վորոնք
ցույց կտան թե մարդու կարիքների համար ան-
հրաժեշտ իրերն ինչից և ինչպես են սատիճանա-
բար պատրաստվում:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Գալառում ապրող կենդանիների գլխավոր
ներկայացուցիչների հավաքածուներ (պրեպարատ-
ներ ֆորմալինի կամ սպիրալ միջ, թոչունների
և կաթնասունների խրամիլակներ, մորթեր, չո-
րացած միջատներ, և այլն: Կենդանիների
գունափոխությունն ըստ տարվա յեղանակների
(սապատակ, տրիս, սկյուռ և այլն):

Պաշտպանողական գույն ունեցող կենդանի-
ների հավաքածուներ (կանաչ գորտ, մողես, յերկ-
րաչափ թիթեռի թրթուռը վոստի վրա, գիշերա-
յին թիթեռները ծառի կեղեկի վրա և այլն),

Ուրիշներին նմանվող կենդանիների հավա-
քածու (միմիկուտ):

Հասարակական կենդանիներ (մեղու, մըր-
ջյուն) հավաքածուներ, զրանց բները, այդ կեն-
դանիների կյանքի զանազան յերեռութները ներ-
կայացնող մողելներ, լուսանկարներ, նրանց
մարմնի կազմության վերաբերյալ նկարներ:

Յերկրագնդի կենդանագրական քարտեզը
ՍևՀՄ կենդանագրական քարտեզը:

Գավառում գտնված կենդանիների ցուցակը՝
մատնանշելով զրանց բնակության վայրերը:
Գավառում տարածված զանազան կենդա-
նիների, բնական միջավայրում հանդած լուսա-
նկարները:

Անսեռ յեղանակով բազմացող կենդանինե-
րի հավաքածուներ, այդ յերեռութը պարզաբանող
նկարներ:

Յերգեցիկ թոշուններ (հավաքածու),
կենդանիներն իրենց մաշկափոխության
տարբեր շրջաններում (հավաքածու);
Վողնաշարավոր և անվորնաշար կենդանի-
ների մեջ հանդիպող ամեն տեսակի անհորմալու-
թյուններ և այլանդակություններ (հավաքածու);

Գավառի կենդանաբանական հետազոտու-
թյունների քարտեզը, վորի վրա զանազան նը-
շաններով ցույց ետքում թե տվյալ գավառի
վոր վայրերը յենթարկված են կենդանաբանական
հետազոտության:

Գավառում կատարված կենդանաբանական
յերեռութների դիտողությունների որացույց;
Դիտողությունները կատարվում են մի շաբք
տարիների ընթացքում և ապա ի մի գումարե-

լով բոլոր փաստերը պատրաստվում ե հատուկ
աղյուսակ, վորի վրա որինակ ցույց ե տրվում
զանազան թոշունների աշնանային չուն, նրանց
գարնանային վերադարձը, բուն շինելու ժամա-
նակը, սոխակի կամ ալլ յերգեցիկ թոշունի ա-
ռաջին յերգը, ձկների ձու զնելու, թիթեռների
վաղ գարնան առաջին յերեալու, թիթեռների
սերնդների միջանց հաջորդելու ժամանակը,
և այլն և այլն։ Շատ ցանկալի յի որացույցի
այդ տվյալներին կցել նաև դիտողության յին-
թարկված յերեռութիւն լուսանկարները։

Անտառի կամ այգու կենդանական կյանքը;
Գավառի այգիներում և անտառներում տպրոդ
կենդանիները (հավաքածու); Այդ կենդանիների
լուսանկարները՝ հանված իրենց բնական պայ-
մաններում։

Առանձին լճակների կամ ավաղանների կեն-
դանական կյանքը; Տվյալ ավաղանի կենդանինե-
րը և նրանց լուսանկարները։

Զանազան կենդանիների հետքերը ձյան
վրա (նկարներ):

Սեռական յերկծեռություն (դիմորֆիզմ) ու-
նեցող կենդանիները (հավաքածու):

Սեղոնային յերկծեռություն ունեցող կենդա-
նիներ (հավաքածու):

Վառ, սպանացող գունավորում ունեցող
կենդանիներ, վորոնց թշնամիները չեն վորում
թունավոր կամ գարշահոա լինելու պատճառով
(հավաքածու):

Կենդանիների շնոքերը սարդերը և թըր-

թուոների կոկոններ, թռչունների բներ և այլն
(հավաքածուներ և լուսանկարներ),

Պարագիտ կենդանիներ (հավաքածու),

Թռչունավոր կենդանիներ (հավաքածու),

Կենդանիների պաշտպանության դանազան
միջոցները,

Կենդանիների զարգացումը; թիթեռների,
բղեղների, ճանճի, գորտի, ձկան, թռչունի (հա-
վաքածու, ֆորմալինի կամ սպիրոտի մեջ);

Թռչունների ձվերի հավաքածու, թռչուննե-
րի բները՝ ձվերով և ձագերով (լուսանկարներ),

Այն բոլոր նկատողությունները վոր արել
են բուսաբանական հավաքածուների վերաբեր-
մամբ, վերաբերում են նաև կենդանաբանական
հավաքածուներին, այսինքն կենդանաբանական
հավաքածուներին ել պիտի կցել կազմախոսական
և համեմատական կազմախոսական բնույթ կրող
պրեզերատաներ։ Թվենք դրանցից մի քանիուը:

1. Վողնաշարավոր և անվողնաշար կենդա-
նիների վերնամաշկերի (ձկան, գորտի, սողունի,
թռչունի, կաթնասունի, խեցգետնի, խխունջի և
այլն) հավաքածու։

2. Տարբեր դասերի պատկանող վողնաշա-
րավորների կմախքներ։

3. Գետնի վրա, ջրի մեջ և ողի մեջ շարժ-
վելու գործարանների հավաքածուներ։

4. Անշարժ կյանք վարող կենդանիների հա-
վաքածուներ։

5. Զանազան դասերի պատկանող կենդանի-
ների հետեւյալ գործարանների հավաքածուներ։

ա) մարտողության գործարաններ,

բ) շնչողական,

գ) արյան շրջանառություն,

դ) արտաթորության,

ե) բազմացման,

զ) նյարդային համակարգությունը և դդա-
յարանները։

ը) անալոգիկ և հօմոլոգիկ գործարաններ,

թ) ռուղիմինտար և այլասեռվող գործա-
րաններ։

Կենդանական աշխարհից նույնակես հարկա-
վոր և կազմել գործադրական (прикладной) հա-
վաքածուներ, ինչպես որինակ՝

1. վնասատու միջատներ,

2. ողտակար միջատներ,

3. ողտակար թռչուններ,

4. ողտակար կաթնասուններ (միջատակեր),

5. կենդանիներ, վորոնք ծառայում հն մար-
դուն իրու կերպակուր,

6. բուրդ, խավամորթ և այլ նյութեր ավող
կենդանիներ։

7. շերամ (թրթուոփի զարգացումը և նրա
տված նյութերի հավաքածու):

8. մեղու (ընտանիքի անդամները մայր,
բոռ, աշխատավոր, նրանց զարգացումը և մեղվի
տված նյութերը):

9. կենդանիների մաշկը և ինչ և նրանից
պատրաստվում։

10. ճարպ, և ինչ և նրանից պատրաստ-
վում։

11. կաթ և ինչ են նրանից ստացվում:
12. բուրդ, մաղ, փետուր և գրանցից պատրաստված իրերը:
13. վոսկը, յեղջուր և ինչ են գրանցից պատրաստվում և այլն:

6. ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնակչության ազգագրական կազմը, խոռոշյունը, ծնունդ, մահացություն, բնակչության բաշխումն ըստ գավառակների:

Առանձին հանողքափիկ տարրերի ֆիզիքական պատկերը՝ հասակ, գանգ, կրծքի լայնություն, մազերի, մաշկի և աչքերի գույն, արյան առանձնահատկությունները և այլն:

7. ԲՐԱԾՈ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՅԵՎ ԲՈՒՅՍԵՐ

Հնեաբանական հավաքածուներ կազմելու հետառնության պատճառով համարյա բոլոր թանգարանները լիքն են բրածո կենդանիներով և բույսերով. Հնեաբանական հավաքածուներն ինքնին հետաքրքիր լինելուց բացի, կարող են մեծ նշանակություն ունենալ նաև եվոլյուցիոն տեսառնության հարցերի լուծման և տվյալ գավառի բուսական աշխարհների զարգացման պատճենաթյունը լուսաբանելու համար. Այդպիսով հնեաբանական բաժինը միացնող ողակն և հանդիսանում կենսաբանական (բուսական և կենդանական աշխարհների) և նրան հաջորդող եվոլյուցիոն բաժինների միջև. Հնաբանական բաժնում հարկավար և ունենալ նաև գավառի բուսական և կենդա-

նական բոլոր բաժինները. Բրածո բույսերի և կենդանիների վերականգնումների (սհստավրացիա) նկարները. Յերկրաբանական գարաշը անհների աղյուսակ, ցույց տալով յուրաքանչյուր դարձըննի զեկավար բրածոները:

8. ԵՎՈԼՅՈՒՅԻՑԻՈՆ ՏԵՍՈՒԿԹՅՈՒՆ

Կասկածից գուրս ե, վոր յուրաքանչյուր գավառ չի կարող հավաքածուների նյութով այնքան հարաւատ լինել, վոր այդտեղ կազմած հավաքածուներով հնարաբոր լինի եվոլյուցիոն տեսառնության զանազան հարցերը լուծել. Բայց յեթե մենք կարողանանք եվոլյուցիոն տեսության հարցերից զոնե մի քանիսը լուծել տեղական հավաքածուներով, այնու ամենայնիվ արժե այդ բաժինը կազմակերպել:

Այս բաժինը գիտելով այցելուն կիմանա, վոր եվոլյուցիան կատարվում և վոչ միայն արևադարձյին յերկրներում, ինչպես ինքն երսիալ կարծիք կազմել գրականություն կարդալով, վորտեղ իրաք որինակները բերվում են մեծ մասմբ արեալարձյին յերկրների բույսերից և կենդանիներից, այլ վոր մեր շընապատի բնությունն ել կենդան աշխարհի համար ընդհանուր որինքների համաձայն յենթակա յի եվոլյուցիայի; Ի հարկե այդ բաժինը կարելի յի չանջատել կենսաբանական բաժնից, այլ միացնել բուսական նյութերը բուսաբանական հավաքածուներին իսկ կենդանականը՝ կենդանաբանական հավա-

քածուներին: Եվոլյուցիոն բաժնի հավաքածուներ
կարող են կազմել:

1. Ըստանի աղավնիների տարրեր տհսակ-
ները (փոփոխականության յիշեռյթներ),

2. Փոփոխականություն արտաքին պայման-
ների ազդեցության տակ (բարձր և ցած աստի-
ճանի բարեխառնության մեջ դարձացրած թի-
թեռների հավաքածուներ):

3. Պոլիմորֆիզմ (բազմաձևություն), (թի-
թեռներ Բցցնիս քափի և Colias),

4. Մեկ կենդանու վտարումը մյուսի կող-
մից (սկ խավարասեր և շեկ խավարասեր, կամ
պլուստակ):

8 Աղյուսակ ցույց տալու համար թե մեկ
խառուտիկից (պուպու) ինչպիսի սերունդ կըս-
տացվի տաս տարվա ընթացքում, յիթե խառու-
տիկի տված բոլոր սերունդները պահպանվեն:

9. Աղյուսակ մկների բազմացման պրոցե-
սիան ցույց տալու:

10. Բուսական համակեցությունների լու-
սանկարներ, վորտեղ մեկ համակեցությունը փո-
խարինվում է մի այլ համակեցությամբ (յեղնի
և սոճի):

11. Ժառանգական հատկությունների անց-
նելը ըստ Մենդելի (աղյուսակ):

12. Միմիկրիա (հավաքածու)

13. Եվոլյուցիոն տեսության հիմնադիրների
պատկերներ:

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառում գտնվող, պահպանության ար-
ժանի ամենաարժեքավոր և հազվագյուտ վայրե-
րի լուսանկարները: Արգելատեղիների (զառա-
նակ) լուսանկարները: Արգելատեղիներից ժողո-
ված հավաքածուներ:

Գավառում պահպանության տակ առնված
բոլոր բույսերի և կենդանիների հավաքածուները:

ԳԱՎԱՐԱԿԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

Գեաք և թանգարանում ժողոված և ցուցա-
կագրված լինին գավառի ուսումնասիրության
վերաբերյալ յեղած ամբողջ գրականությունը:
Գրքեր, ըրոշյուրներ, թերթեր, հանդեսներ, լրա-
գիրներ և այլ հրատարակություններ, վորոնց մեջ
գավառի ուսումնասիրության վերաբերյալ հող-
վածներ կան:

Գավառի վերաբերյալ բոլոր աշխատություն-
ների բովանդակությունն ու հրատարակության
տարեթիվը: Զեռագիրներ:

Գավառն ուսումնասիրողների լուսանկարնե-
րը և նրանց կենսագրությունները:

Գավառի ուսումնասիրության վերաբերյալ
ամեն տեսակի գործերի արխիվ:

ԵՐՍԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՏԱԶՈՑԱԿԱՆ

ՊԱՐԱԳԱՆԵՐ

Տեղական բնության թանգարանը բնագի-
տական գիտելիքների տարածման նպաստելու և

գործի մեջ նոր ուժերներգրավելու համար պետք է ունենա հասուլկ բաժին ուր հավաքված լինեն դավան ուսումնասիրելու գործիքները: Թանգարանի այցելուն տեսնելով պարագաների այդ հավաքածուն, կարող ե ձեռք բերել նման գործիքներ և նրանց ողնությամբ հավաքածուներ կազմելով մեծապես նպաստել զավառի ուսումնասիրության գործին: Ստորև բերվում են զլիսավորապես եքսկուրսիոն բնույթ կրող գործիքների անունները: բայց ի հարկե այդ հավաքածուներին կարելի յի միացնել նաև լարորատոր և ստացիոնար ուսումնասիրությունների վերաբերյալ գործիքներ:

Բուսաբանության վիրաբերյալ:—

1. Բուսարկղ. (բատանիզիրկա),
2. Բուսաբանական բան (СОВОК) բույսերը արմատով հանելու համար:
3. Ետիկետներ,
5. Գրչահատ,
6. Թղթապանակ կամ մետաղի ցանցով փայտյա շրջանակներ և հասարակ թուղթ բույսեր չորացնելու համար:
7. Տոպրակներ սերմերի համար:
8. Ծալվող խոշորացույց,
9. Եքսկուրսիոն պայուսակ:
- Կհնդանաբանության վերաբերյալ:—
1. Եքսկուրսիոն պայուսակ
2. Փորձանոթներ և ապակյա այլ անոթներ:
3. Եքսկուրսիոն գոտի:
4. Եքսկուրսիոն բանկա:

6. Ցանց ջրային միջատներ վորսալու:

7. Հեղձարան միջատներին սպանելու համար:

8. Քլորոֆորմ կամ յեթեր կենդանիներին սպանելու համար:
9. Գրչահատ
10. Մկրատ,
11. Ունելի (պինցետ),
12. Միջատաբանական գնդասեղներ
13. Ստվարաթղթի տուփեր միջատների համար.

14. Բամբակ:

Հանքաբանության կամ յերկրաբանության վերաբերյալ:—

1. Ցեղաբանական մուրճ,
- 2 Կտրիչ քարեր կոտրելու համար:
- 3 Ցեղաբանական գավազան յերկաթյածայրով:
4. Ծալովի մետը (կամ ոռուելու),
5. Լեռնային կողմնացույց,
6. Թղթուտ սրվակով,
7. Եքսկուրսիոն պայուսակ:
8. Զերմաչափ,

9. Թուղթ, բամբակ և արկղներ քնքուշիրերը փաթաթելու և պահելու համար:

10. Ետիկետներ:

Ոգերեսութաբանության վերաբերյալ:—
Ոգերեսութաբանական ցուցադրական կայարան կլիման ուսումնասիրելու անհրաժեշտ գործիքներով:

Հողագիտության վերաբերյալ. —

1. Բահ, փոս փողելու համար.
 2. Գայլիկոն (բըր):
 3. Տուփեր հողերի տեսակները զետեղելու

համար:

- #### 4. Ետիկեաներ.

Այստեղ բերված են ամենատաճառիկաժետ գործիքները և պիտույքները, մանրամասնությունները կարելի յե զտնել համապատասխան պրականության մեջ:

Կարիք չկա ասելու, վոր թե կենսաբանական և թե այլ տեսակի բոլոր եքսկուրսիաների ժամանակ անհրաժեշտ գործիք և հանդիսանում նաև լուսանկարչական ապարատը, գավառի քարտեզը, մատիտը և հուշատերը։ Ավելորդ չի լինիլ թանգարանում ունենալ նաև մանիկեն եքսկուրսիան հագուստով և պարագաներով։



9. *Surveys*

1. Руководство к зоологическим экскурсиям и собиранию зоологических коллекций, под редакцией прив.-доц. Г. А. Кожевникова 1902 г..
 2. Жарков С. Н. Музей местной погоды. Метеорологические наблюдения в школе, ГИЗ. М., 1922 г.
 3. Нечаев А. П. Мой горный музей.
 4. Романов Н. И. Как устраивать местные музеи. Изд. по охране художественных сокровищ. М. 1919
 5. Руководство к устройству школьного естественно-исторического музея местной природы. Изд. Блэка СПБ. 1911.
 6. Зеленко А. У. Школьный музей М. 1927
 7. Феноменов М. Музей местного края М. 1922.
 8. Кругликов П. Школьный краеведч. музей и его работа. М. 1927.
 9. Бутурлин С. А. Наставление к собиранию птиц. ГИЗ. М., 1919.
 10. Жадавский А. Э. Наблюдение над жизнью растений на экскурсии 1921.
 11. Золотницкий Н. Ф. Аквариум любителя. М. 1916.
 12. Наталик А. Ф. Животные и растения в углах живой природы Госизд. 1925.
 13. Павлович А. С. Простейшие работы по изготовлению коллекций в школе и дома. Ленин. 1915.
 14. Райков, Б. Практические занятия по зоологии. СПБ. (Книга, вводящая в анатомирование животных).
 15. Растворцев С. И. Как составлять гербарий. Москва, 1924.

16. Шаффен Д. К. Приготовление биологических коллекций. СПБ, 1913.
17. Штандфус М. Жизнь бабочек, их ловля, воспитание и сохранение.
18. Четвериков С. С. Краткое наставление к собиранию насекомых. ГИЗ, М. 1919 г..
19. Ягодовский К. П. Летние работы по естествознанию.
20. Федченко, Б. и Флеров, А. Флора Европейской России.
21. Бау, А. Определитель жуков средней Европы. СПБ., 1914.
22. Богданов-Катыков Н. Н. Практическая энтомология П. 1921. Вып. I и след.
23. Бареццус Ф. Бабочки Европы СПБ. 1898.
24. Ламперт К. Жизнь пресных вод. СПБ. 1900.
25. Ламперт. Атлас бабочек и гусениц Европы.
26. Шлехтендаль и Вюнше. Определитель насекомых М., 1908.
27. Варнаховский Н. А. Определитель пресноводных рыб Европейской России. СПБ., 1898.
28. Мензбир М. А. Птицы России.
29. Сатунин, К. Л. Определитель млекопитающих Российской империи.
30. Бекстов, В. Определитель механического состава почвы и свойств ее по отношению к воде 1900.
31. Коротков, П. В. Как определять минералы? М., 1916.
32. Иванов, А. П. Определитель ископаемых верхне и средне-каменноугольных отложений Московской Губернии. М., 1910.

ՀՀ Ազգային գրադարան



NL0249915

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՐԱՎԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՆ

Խմբագրում ե և հետզհետե լույս ե ընծայելու¹
հետեւալ հետազոտական
ԾՐԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1. Յերկրաբանական (Ժող. Տնտ. Խորհուրդի ծախքով):
2. Հողագիտական:
3. Կլիմայաբանական (Հողժողկոմի ծախքով):
4. Ֆենոլոգիական (Հողժողկոմի ծախքով):
5. Ինչու և ինչպես պետք ե ուսումնասիրենք ջրերը (Ջրվարչության ծախքով):
6. Բուսաբանական:
8. Արդյունագործական (Ժող. Տնտ. Խորհի ծախքով):
9. Հասարակագիտական:
11. Մարդաբանական (Առժողկոմատի ծախքով):

I. ՈՒ Ե Ս Ս Ե Տ Ե Ս Ե I.

10. Ստ. Լիոնից յան և Յե. Բայրուրդյան. Հնությունների ցուցակագրությունն ու նկարագրությունը:

ՊԱՀԵՍԸ Յերեան, Կենտրոնական Գավառագիտական Բյուրո, Լուսժողկոմատ: